Սիպիլ

Ապրի՛լ

Ինչո՞ւ գըրել, խոսիլ, խոկալ,
Հարցում ուղղել չորս հովերուն, տիեզերքին,
Երբ հարցումներդ, գոչյուններդ ալ
Պիտի մարին, պիտի հալին, պիտի ցնդին
Ալքերուն մեջ մեծ անդունդին:

Ինչո՞ւ խորհիլ, տըքնիլ ինչո՞ւ,
Երբ անկարող ես թափանցել, հպանցել գեթ
Կյանքն ըսպառող գաղտնիքներուն,
Երբ խեղճ մտքիդ բոլոր ճիգերն, ավյունն
Անէանա պիտի հավետ:

Ինչո՞ւ երկնել, ինչո՞ւ տալ կյանք
Սրտիդ հըրուտ հուզումներուն, թե ցիրուցան՝
Ժամանակին ճիրանին տակ
Օր մը անոնք բըզիկ-բըզիկ պիտի ըլլան
Մոռացության դարձած ճարակ:

Ինչո՞ւ հեծել, ինչո՞ւ հևալ,
Երբ ոգեսպառ աղաղակովդ անհուն, անծայր
Դուն չես կարող պահ մը վերջ տալ
Թըշվառության հորդ հեղեղին ամպրոպավար,
Որ կ՚ողողե համայն աշխարհ:

Ինչո՞ւ սիրել սերտ, խանդակաթ,
Թե չես կարող պահել գրկեդ հար անբաժան,
Հոգե, ցավե, վերքե ազատ,

Եվ կը թողուս որ մահն անգութ գա խլել զայն
Զոր սիրեցիր հոգիեդ շատ:

Ինչո՞ւ ապրիլ, թափել արցունք,
Երբ չես կարող ըսել դժբախտ էակներուն
Զորս կը տանջե քաղցն ու պասուք .
«Մի՛ գրկըվիք, ահա՛ մարմինս, ահա՛ արյուն,
Առե՛ք, կերե՛ք, ապրեցե՛ք դուք»:

1931